Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **17.10.2025թ. ժամը 15:00**

ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի 8 անդամներից 6-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանը, մարզպետի խորհրդականներ Սևակ Խլղաթյանը և Ալբերտ Աղեկյանը, մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

Օրակարգում՝

1. **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների 2025 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, համայնքային բյուջեների գործընթացի կազմակերպման վերաբերյալ.**

   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

2. **2025 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների կողմից նախորդ տարիների ապառքների գանձումների մասին.**

   /Զեկ. Ալբերտ Աղեկյան - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի խորհրդական/

3. **ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում 2025 թվականի 9 ամիսների ընթացքում գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ.**

   /Զեկ. Էդգար Գևորգյան - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ/

4. **ՀՀ Գեղարքունիք մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության**

կողմից 2025 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ.

/Զեկ. Սասուն Սահակյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ/

5. **ՀՀ Գեղարքունիք մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից 2025 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների մասին.**

/Զեկ. Կարեն Զազյան - մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ/

6. **ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության 2025 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված աշխատանքների մասին.**

/Զեկ. Լուսինե Վարդանյան - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության վարչության պետ/

7. **-ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում աղբահանության վարձավճարների հավաքագրման և ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի Կոշտ կենցաղային թափոնների կառավարման կենտրոնի դրամաշնորհների տրամադրման հիմնախնդիրների մասին.**

/Զեկ. Վանիկ Հարությունյան - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ/

8. **Այլ հարցեր:**

Հայտարարությամբ հանդես եկավ մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Մարատ Ղուրշուդյան:

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվեց՝

1. Բնակավայրերի սահմանագծերում առկա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը օտարելուց առաջ սահմանված կարգով փոխել դրանց նպատակային նշանակությունը.

2. Համայնքային ենթակայության գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզիաների ձեռքբերման աշխատանքները կազմակերպել սահմանված ժամկետներում և գործող ընթացակարգերին համապատասխան.

3. Հետևողական աշխատանքներ տանել համայնքների բյուջեների մուտքային պլանային ցուցանիշներն ապահովելու համար և հատուկ ուշադրություն դարձնել ժամկետանց ապառքների գանձման իրավական գործընթացի ապահովմանը.

4. Սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքներն իրականացնել գործող շինարարական նորմերնի և նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան.

5. Համայնքներում աշխատանքներ իրականացնել աղբահանության վճարների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ :
« Գեղարքունիքի և Կոտայքի ԿԿԹԿԿ»-ի բնականոն գործընթացն ապահովելու համար համայնքների 2026թ. բյուջեներում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ աղբահանության գումարների վճարման համար /եռամսյա կտրվածքով/.

6. Մարզում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին ներգրավվել համայնքների վարչական ղեկավարներին և համայնքապետարանների քաղաքաշինության բնագավառի համապատասխան մասնագետներին.

Ճամբարակ համայնքի ղեկավարին առաջարկվեց՝

1. **Հետևողական աշխատանքներ տանել Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծի 4 բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչներին նոր բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու համար հողամաս ընտրելու և հետագա աշխատանքներ իրականացնելու համար.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

X _____

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ